ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԶՈՎՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Զովք համայնք գլ. խաչուղի 16
էլ.փոստ .`angin..araqelyan@mail.ru

05. 06. 2017թ.
N 66

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

ՊԱՐՈՆ՝ Կ. ԳՈՒԼՈՅԱՆԻՆ

Ձեզ ենք ներկայացնում Զովք համայնքի ղեկավարի թիվ 29-Ն և 30 որոշումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ն. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՈՎՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Զովք համայնք գլխ. խճուղի 16
էլ.փոստ angin. araqelyan@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29-ը մայիսի 2017 թ. N 29-Ն

ԶՈՎՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 24-Ի ԹԻՎ 15-Ն ՈՐՈՇՈՒՄԸ ՀՐԱՊԱՐԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 1-ին մասով և 63-րդ հոդվածի 2-րդ մասով.

Որոշում եմ՝

1.Զովք համայնքի ավագանու 2017 թվականի մայիսի 24-ի « Զովք համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 48-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» թիվ 15-Ն որոշման հրապարակումն իրականացնել Զովք համայնքի տարածքում փակցնելու միջոցով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ն. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՈՎՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Զովք համայնք գլ. Խաչուղի 16
էլ.փոստ .՝ angina.araqelyan@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 30

30 -ը մայիսի 2017թ-ի

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ԱԼԲԵՐՏ ԲԵԿԼԱՐԻ ԳԱԼՈՒՍՏՅԱՆԻ, ԹԱԳՈՒՀԻ ԱՂԱՍԻ ԵՐԱՆՈՍՅԱՆԻ, ԱՐՄԵՆԱԿ ԱԼԲԵՐՏԻ ԳԱԼՍՏՅԱՆԻ , ՄԱՐԻՆԵ ԱԼԲԵՐՏԻ ԳԱԼՍՏՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով քաղաքացիներ Ալբերտ Գալուստյանի, Մարինե, Արմենակ Գալստյանների, Թագուհի Երանոսյանի դիմումները , որով ցանկություն է հայտնում օրինականացնել սեփականության իրավունքով իրեն պատկանող Կոտայքի մարզի Զովք համայնքի 7-րդ փողոցի 1-ին նրբանցքի 2-րդ տնամերձում ինքնակամ կառուցված 360,27քմ բնակելի, օժանդակ և պարիսպ:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ-ի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8, 9, 10 , 11, 18-րդ կետերի և ՀՀ կառավարության 02.02.2002թ-ի թիվ 91-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի պահանջներով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ քաղաքացիներ Ալբերտ Գալուստյանի, Մարինե, Արմենակ Գալստյանների, Թագուհի Երանոսյանի կողմից ինքնակամ կառուցված շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օենքով պահպանվող շահերը, կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, շինությունները կոուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների կամ անվտանգության գոտիներում , կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Քաղաքացիներ Ալբերտ Գալուստյանի, Մարինե, Արմենակ Գալստյանների, Թագուհի Երանոսյանի կողմից իրենց սեփական տնամերձ հողամասում ինքնակամ կառուցված 217,53քմ բնակելի տունը , 140.45քմ օժանդակ շինությունները և 2,29քմ պարիսպը համարել օրինական, քանի որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը:
2.Ինքնակամ կառույցների համար համայնքի բյուջե վճարել 217.53քմ բնակելի տանը անգամ 8(դրամ հավասար է 187076 դրամ, 140,45 քմ օժանդակ շինությունները անգամ 516 դրամ հավասար է 72472 դրամ և 2.29 քմ պարիսպը անգամ 516 դրամ հավասար է 1182 դրամ, ընդհամենը 360,27քմ հավասար է 260730 դրամ:
3. Համայնքի ղեկավարի 2017թ.-ի մայիսի 23-ի թիվ 27 որոշումը ուժը կորցրած ճանաչել:
4.Սույն որոշումն ուժի մեջ մտնել ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ն. ԳԵՎՈՐԳՅԱՆ